

ՀԱՏՈՐ ԻԹ 1891 ՕԳՈՍՏՈՍ

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԵՐԷՆ ԳՐՉԱԳՐԱՑ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՈՒԽՏԻՆ ՄԽԻԹԱՐԱՑ

Ի ՎԵՆԵՏԻԿ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳԻՐՔ

(Տես յ'էջ 129, շաբունակութիւն)

Դ. Օրինակ, (Թիւ գրչա. 935). Նիւթ՝ թաղթ բամբակեայ։ — Չափ՝ բոլորգիր մէջակ, երբեմն մանրագոյն, և ընդհանրապէս ընտիր և արուեստական։ Գրիչք՝ զանազան, և որոց անուանք կը նշանակուին ի յիշատակարանս։ — Նկարիչ և զարդագրող՝ Աւետ գրիր։ — Թուականն գրչուրեանն ձեռագրին՝ ՉԿ Հայոց = 1341։ — Ստացող՝ որոյ համար գրուած է, Գրիգոր քահանայ, յեռոյ և ապէք։ — Էջք՝ ընդ ամէնն 1270 կամ 635 թաղթք։ — Մեծութիւն՝ 24×17։ — Գրութիւն՝ երկսիւն — Չողք՝ իւրաքանչիւր սիւնակաց 35։ — Հանգամանք, լաւ վիճակի մէջ։ — կազմ՝ ամուր, հաստա-

digitised by A.R.A.R.@

կանաչաբար գրչութեան թուականին կամ քիչ եւաքը։ — Բաց ի գլուխ գրոցն գրբուածէն՝ չունի ուրիշ պատկեր. բայց բազմաթիւ են խորանք ի սկիզբն իւրաքանչիւր գրոց, ընտիր նաշակաւ և յօրինուածով. և որ տեղ տեղ կը պակսին կամ անկատար մնացած են, մնասանդ ի նոր կատարանս, անշուշտ արուեստագիտին համար ժամանակ կամ հատուցման գրամ պակսելով։ — Ի և աւ խառն գործածուած են մի և նոյն գրիչներէ։ — Ընթերցուածք՝ հմտական, և գերծ ի վրիպանաց։ — Ցիշատակարանք, այլ և այլ անձանց և ժամանակի։

« Զստացող աստուածազումար տառիս զամենեղջանիկ և զճոխացեալն ամենայն իմաստութեամբ զերանաշնորհ զքահանայն զԳրիգոր. ծնողաց, զարմնոյ, զաւակօք ազաչեմ յիշել ի տէր Ցիսուս Քրիստոս աստուածն մեր։ Նա եւ զնը-կարատող սորա զԱ.ազ զպ'' ծնողաց հանդերձ. յիշեցէք ի Քրիստոս։ Եւ զայլ աշխատողսն։ Ընդ նոսին և զվցուն զրչիկս զկար''. յիշատակի արժանի արարէք»։ ի ցանկն Եղից՝ ի վերջն, ինչպէս նաև ուրիշ տեղեր, «ԶԳրիգոր քահ'' զստացող յիշէ»։ — Ց'ԷՀն 235—36 թուի որ անկեալ ի կարգէն, զոր լրացուցեր է նոր գրիչ մը՝ հետեւեալ յիշատակարանն աւելցընելով. «Ոչ եղբարք յորժամ տեսանէք և ընթեռնուք զայս գիրքս՝ յիշեցէք սուտանուն Մարգիս եղուկս որ գրեցի զստորուկս, թուին ՌՂԱ»։ — Ի վերջ Զորրորդ թագաւորութեանց. «Զստացաւ աստուածախօս մատենիս զԳրիգոր քահ'' յիշեցէք ի Քրիստոս. նաև զմեղուցեալ ծրոցս ամէն»։ ի կատարած գրոցն Երեմիայ. « Զամենայն բարեաց արժանաւորն զստացող աստուածախօս բուրաստանիս. յիշեցէք ի Քրիստոս Ցիսուս ի տէր մեր։ Եւ զիս զանարժան ծրոցս, և ձեզ և մեզ ողորմեսցի Քրիստոս. և նմա փառք յաւիտեանս յաւիտենից ամէն»։ — Ի վերջ Երեմիայ. « Զանմարմնոցն զաւակիցն, և զբերոցն պարակիցն, զփափագողն և զստացողն աստուածախօս մատենիս զԳրիգոր քահ'' յիշեցէք ի Քրիստոս։ Ընդ նմին և զաղքատս ի — բարեաց»։

Ցետնախադրութեան Ա. Մակարայեցւոց. կը կարդանք հետեւեալ երկար, ճոխ, գեղեցիկ և իմաստալից յիշատակարան. «Փառք... Աքանչելի իմն են կարողութեանն հրաշք աստուածութեանն. սոսկալի բոլորից մասանց մակացութեանց բանականաց. ևս երկնաբիւրաց փառաբանողաց պանծացուցանելի. յորմէ երկին և երկիր և միանգամայն և ծով ամենայնիւ լրիւ զոյացեալ կառուցաւ։ Հրանութիւնն սեռք երամք երամք և ջոկք ջոկք ըստ դասի իւրաքանչիւր բնութեան պատուի, և աստիճանօք և ուրիշք զանազանեալ անջատեցաւ՝ անկասելի փառաբանութեամբ մեծաշնորհեալք. Եւ արժանապէս անուան հանդիպեալք հոյլք լուսեղէն զուարթնոց. վիպասանիչք անվիպասանելի միանջնաւոր խորին խորհրդոցն Աստուծոյ։ Երկին բովանդակեալ զծայրիւ. ծագաց վեհ մակերեւութիւն անհանդուրժելի սրընթացութեամբ պարառեալ շրջագայ զտիեզերական ոլորտիւ։ Աստեղք մեքրափայլք և ականակիտք նկարակերտելով զիւրաքանչիւր դիրսն. լուսին կարգնաձև լրացեալ արեգակնապէս զբոլոր գիշերն չհանտրէ։ Եւ արեգակն ի հասարակահոլով ժամանեալ ամանակ՝ զմիջակս երկնի և երկրի հոլանէ։ Օդք զարբեխառնական և զպտղածող բուրեցին շունչ։ Եւ դերբուսական սեռք մնկոց ըստ բերման պայման ամանակին ներընդունելութեամբ հիւթոց բերելով ի ծայրս զծաղկանցն զանա-

digitised by A.R.A.R.@

զանութիւնս պտղոց, համոց և հոտոց։ Եւ պարարիկ օդապատ հատունք ճոխացեալ արագութեամբ և վաղչացեալք զանազան նուագօք և զեղեցիկ եղանակութեամբ երգն անլռելի. բուսեալով ոմանց ի ծերպս վիմաց ևս ի ծայր ծառոց։ Եւ կենդանիք երկրայինք բազմադէմք այլակերպք միմեանց. ոմանց դժնդակ և ձառաղէմ կազմվորինեալք ունելով սպառելի մարդիս և ժանիս և ճիրանուն գազանադիրդ բարուք. և այլք ոմանք հեզ անմանութեամբ արօտութեամբ յղփացեալ շրջին։ Եւ զեռունք սողնոց որոջացեալք ըստ ազգս ազգս բուսեալով ի փապարս երկրի և ի խորշս լերանց։ Եւ ջրային լողակք կէաք մեծամեծք ընդ անդընդային գնացս ծովս և ընդ ուխս գետոց ընթանան։ Եւ այսք ամենեքեան յոլով զարմանալիօք ստեղծեալ կարգեալ հաստատեցան ի բոլորից արարչէն ի վեց օր արարչութեանն։ Եւ ապա կազմէր զտեսակ մարդոյ ի պատկեր բարերարութեանն իւրոյ, ընտրեալով նմա շնորհս անճառելիս և աստուածապատում։ Ընդ որում նախանձեալ բանսարկուն ապստամբեալն առաջին՝ մարտ ի մէջ եդեալ զատանութեամբ կնոջն և կորացութեամբ ներքին մարդոյն յաղթեալ զրկեաց ճողոպրեալ ի նմանէ զփառան վերին պարգևացն. և ստրուկ զնա ի հայրենական պարգևացն կացուցանէր. և հանեալ յերջանիկ կենացն իջանէր ի թշուառական կեանս։ Զոր տեսեալ հզօր ողորմածին եղծեալ զպատկեր փառաց անուան իւրոյ, և այնուհետև իմանայր զինար նորոգման նորա։ Որ և զպատճառ փրկութեանն մարդոյ՝ ազգի ազգի զուշակութեամբ և զանազան սքանչելիօք եցոյց յաշխարհի, ի ձեռն նահապետացն մեծաց և մարգարէիցն սրբոց բանիւք և օրինակօք բազմօք յոլովիւք։ Եւ ապա ի կատարումն ասացելոցն ամենայնի եկն աստուած և մարմնացաւ ի սուրբ կուսէն Մարիամայ հրեշտակին ուրեարանութեամբ. և շրջեալ զժամանակս կատարման տնտեսական տնօրէնութեան կատարեաց զամենայն։ Եւ զհին մարդն բեւեռաց ընդ խաչափայտին և զատապարտեաց զմեղս ի մարմնի անդ. և յաղթեաց իշխանութեանց և պետութեանց. խորտակեաց զդրունս դժոխոց, և կոխեաց զհին վիշապն առաջին, և ջախեաց զպուխ նորին. ազատեցոյց զարգելեալսն սքանչելի զօրութեամբ։ Որով ստատնայ ընդ ամենայն ջան վաստակոցն իւրոց ունայն և թափուր մնայր ամենայնի ի տանջանս միտնջենատրս։ Եւ յետ այսմ՝ իմաստութիւնն Աստուծոյ կարգեացժողովս առաքելոց փչմամբ հոգւոյն շնորհաց. ելից բազմերանգ զանազանբիւք պարգևաց. եռ պատուէր զսուրբ ուրեարանն իւրոյ փրկութեան հաստատեցեալ. և ապա համբարձաւ փառաւք ի յերկինս. և նստաւ ընդ աջմէ զօրութեանն ի բարձունս։ Իսկ արդ թէպէտ բաղձանք բանին բնաւորեալ է յոգիս բանականաց արարչական տրութեամբ յոլովք զարթուցեալ յօժարիմք ի քննութիւն սորին. սակայն անդիտացեալ զկամս արարչական հրամանին զիմեմք ի տաւրս աստուածայինս. ուստի կարեմք տրամադրել զվիտս մեր ի մակացութիւնս սուրբս ի սկզբանէն մինչև ցվախճան զհրաշս եռամսեռեան ժամանակի։ Եւ այս է տառս սուրբ որ յորիրջեալ կոչի զիրք աստուածաշունչ՝ որ ունի բովանդակեալ յինքեան զամենայն հին և նոր կտակարանաց աստուածութիւնս. սկսեալ ի սկզբանէ աշխարհի մինչև ի կատարած աշխարհի, մարգարէից և առաքելոց և ուրեարանչացն սրբոց։ Ի սմա գտանիցես լուսաւորութիւն մեռաց և ճանապարհ փրկութեան իմաց

նաս զպատուիրան ս Աստուծոյ, և զպարգեւս հոգւոյն սրբոյ, և զօգտակարութիւնս ա-
ռաքինութեանց։ Յոլով հասցէ մարդ ի գիտութիւն հաւատոյ, յուսոյ և սիրոյ։
Այսու հրամանաւ և գրաւ տուրբն պարտեցին զիաղատութիւն, խղին ըզ-
բերանս առիւծուց. շիջուցին զօրութիւն հրոյ. ապրեցան ի բերանոյ տրոյ. զո-
ւրացան ի տկարութենէ, հասին աւետեացս, ի ձեռն այսու աստուածաշունչ գր-
ոց։ Ոմանք մարգարէացան վասն սորայ. ոմանք առաքեալք եղեն. ոմանք ա-
ւետարանիչք. ոմանք վարդապետք. ոմանք մարտիրոսացան. և այլք կուսանք և
այլք միանձնացան ճգնաւորութեամբ. և սոքա ամենեքեան հասին աւետեացս
Աստուծոյ։ Այս է գիտութիւն գիտութեանց որ բարձրանա քան զամենայն ի-
մաստասիրական տեսութիւնս և լինի նախամեծար քան զամենեսեան պատուով
և օգտակարութեամբ։ Այս է շտեմարան աստուածայնոյ յաշարակաց հեշտալի
քան զխորխս մեղու։ Այս է գանձ բաղձալի քան զոսկի, և քան զանուս պա-
տուական։ Այս է աղբիւր հոսեալ ի տեղոջէն փափկութեան ոռոգել-զիմանալի
դրախտ զքինտորեալս եկեղեցի։

«Արդ այսու աստուածային ճոխութեանս ըղձացեալ բաղձանօք, և անձկա-
ցեալ փափագմամբ, մեծ ջանիւ և սիրով անապարեալ զհետ ստանալ զսայ վեհի-
մաստ քահանայն Աստուծոյ Գրիգոր. որ և ինքն իսկ ունէր զշնորհս վարդապե-
տութեան. զօրեղ բանիւ լեզուաց և վկայութեամբ սուրբ գրոց. և լիապէս զաբ-
զարեալ առաքինութեամբ և իմաստութեամբ զմաստնս հոգւոյ իւրոյ և մարմնոյ.
և բազում աշխատութեամբ ստացաւ զսայ ի հալալ արդենից իւրոց, յիշատակ իւր
և ծնողաց իւրոց, և ի ժառանգութիւն զտակի իւրոյ սպասաւորական քահանայի
Եփրեմի, ի թվականութեանն Հայոց ՉՂ ի յաշխարհակալութեանն փոքր շեխ
Հասանի և հիպատոսութեանն և սպարապետութեանն Հայոց Բիւրթելին ի քա-
ղաքն Սուլտանիայ։ ի քորեպիսկոպոսութեանն Օրտուի տէր Յարգսի և եպիս-
կոպոսութեանն տէր Գրիգորի։

«Արդ յամի ծննդեան փրկչին մերոյ հազարերորդի երեքհարիւրերորդի յիսնե-
րորդի չորրորդի. և ի թվականութեանս Հայոց ութհարիւրերորդի երրորդի. և յամ-
սեանս սեպտեմբերի քսան և հինգ. ի մարերի եօթն ի մայրաքաղաքս Բաղ-
դատ. ի յաշխարհակալ բանտարութեանն մեծ շեխ Հասանի. և ի հայրապե-
տութեանն ամենայն Հայոց տէր Մխիթարի. և ի քորեպիսկոպոսութեան
այսմ նահանգի տէր Յարգսի. Եփրեմ քահ. որդի հարազատ Գրիգոր քահանայի
ստացողի սրբոցս. պարգևեաց զգիրքս աստուածաշունչ ինքնայօժար կամաք սուրբ
նշանին վարագա, և նորին եկեղեցւոյն. տուրբ մշանջենաւոր և յաւիտենական.
յիշատակ բարի իւր և ծնողաց իւրոց։ Արդ ամենեքեան զոր հանդիպիք այսմ
աստուածաբուխ և շնորհաբաշխ գրոցս, և լուսաւորիք ի սմանէ ընթեռնլով կամ
յարացուցելով, յիշեսջիք ի Քրիստոս զամենարջանիկ քահանայն՝ զփոխեցեալն
ի քրիստոս, զտէր Գրիգոր ստացող գրոցս. և զպարկեշտուհի ամուսին նորա ըզ-
տիկնաց, և զպատուական եղբայր նորա քահ՚՚ տէր Յարգիս. և զայլ ննջեցեալսն
և զհանգուցեալսն առ Աստուած յիշեսջիք սրտի մտաք յաղօթս։ Եւ զսրբասնեալ
քահանայն ասլցեալն առաքինութեամբ և պարկեշտութեամբ զԵփրեմ, և զսրբ-

digitised by A.R.A.R.@

բաւէր կենդանիցն նորա զթութիւնն. և զաստուածատուր զտաւկան նորա զիաղբէ-կրն, և զԱդիզբէկն, և Խամէլիքն. և զաստուածաբեր եղբայրն Երիրեմի զՄը-խիթարն և զայլ արեան մերձաւորս յիշեսջք ի քրիստոս. և զուք յիշեալ լիջիք, ամէն։

«Եւ արդ ես նուաստս Երիրեմ քահանայ. որ ունէի զգիրքս աստուածաշունչ ի հօրէ իմմէ ի Գրիգոր քահանայէ. Նուիրեցի և ետու զայս ուխտին Վարագայ սուրբ Նշանին յիշատակ ինձ և ծնողաց իմոց։ Եւ ետու այնու զդաշամբ, զի միաբանք սուրբ ուխտին և քահանայք նորայ, յորժամ հասցի գիրքս առ նոսայ, զկարգ քահանաթաղմանն կատարեսցեն բոլանդակ. և արացեն զգիշերային պաշտօնն, և օծցեն խաչ սուրբ յանուն հօր իմոյ Գրիգոր քահանայի։ Եւ զեւթն աւուր ընթերցմունքն և զաղօթսն կատարեսցեն կարգաւ։ Եւ ամ յամէ յիւրաքանչիւր տարի երկոտասան պատարագ մատուցեն. վերցն յանուն հօր իմոյ Գրիգոր քահանայի. և միւս վերցն յիւր անուն Երիրեմ քահանայի։ Այդ այսուհետեւ յորմէ գիրքս աստուածաշունչ ընծայեցաւ և տուաւ Նշանին Վարագայ և եկեղեցոյ նորայ, և բոլոր ուխտի նորա. այսուհետեւ հաստատեմք զի ոչ ոք եպիսկոպոս, կամ հայրապետ վանայ, կամ եկեղեցպան, կամ քահանայ, կամ տարկաւագ, և կամ այլ ոք կարասցէ հանել զգիրքս ի սուրբ եկեղեցոյն Վարագայ սուրբ Նշանին։ Ոչ ծախելով, և ոչ ընդ գրաւականս դնելով, և ոչ օժտելով և ոչ գողանալով.... Եւ զարձեալ պարտ է զյիշատակարանս այս ի յամէն աւուր հինգշաբաթի օր ի յաւետեան եկեղեցոյն ի ընթիս ամենեցուն ընթեռնուլ...

«Զբարեպաշտ այրն Աստուծոյ, զողորմածն սրտիւ և լի հաւատովն Աստուծոյ և բարի գործօք, պարոն Խուրշուդէկն. և զաստուածաբեր կենդանիս նորա զտիկին Ոգովխանիսն յիշեսջիք առ Աստուած յաղօթս ձեր»։

Ցետ գրոցն իմաստութեան. «Աստուած զողորմի Մովսէս վարդապետին Մեծոփայ վանաց և իւր ծնողացն որ ի Պդ Թվականին զգիրս Առակաց գրեաց ի սուրբ ուխտն Վարագ»։

Անմիջապէս եաքը կ'անցնի ի նոր կտակարանս, բայց առանց դնելու Եւսեբի թուղթը, աւետարանաց համանձայնութիւնքը, և այլն. սկսանելով յաւետարանէն Մատթէի։ — Պօղոսի առ Եբրայեցիս թղթոյն մէջ՝ ուր գհաւատոց կը խօսի, հետեւեալ ծանօթութիւնները կը գտնենք ի լուսանցս, որ և ուրիշ գրչագրաց մէջ այլ կը տեսնուին։

«Որք հաւատով պարտեցին զթագաւորութիւնս». ի լս. կը նշանակուի. Աբրահամ,
«Գործեցին զարդարութիւն». — Աբրահամ. փենեէս. (Մովսէս, Ցեսու։
«Հաստատեցաց». — Ցեսու, Դաւիթ։
«Շինեցին զզօրութիւն հրոյ» — Եղիա մանկունք։
«Ապրեցան ի բերանոյ արոյ. — Ուրիա, Եսայի։
«Զօրացան ի տկարութենէ». — Եզեկիա։
«Եղեն զօրաւորք ի պատերազմի». — Աբրահամ, Մովսէս, Սամսոն։
«Առին զանանուն օտարաց». — Բարակ, Դաւիթ։
«Ընկալան զանապատ ի յարութենէ զմեռեալս իւրեանց». — Կիրն Սոնեցի, Սարեփ-
«Եղէք կոչողեցեալ...». — Մակաբայեցիքն հօրն եղբարք և մայրն։ (Թագի։

digitised by A.R.A.R.@

«Ի՞նչ կեանք զասանչանաց և զբանիցն զփորձ առին». — Եղիշէ, Երեմիա, Մխիթա։
«Զկապանաց և զբանդից». — Ուրիա, Ցովէա։
«Զարիկոծեցան». — Նաբովթ, Զաքա իս։
«Ողոցեցան». — Եսայի։
«Փորձեցան» — Զորաքարել. Մէքէէ։
«Պատնամամբ սրոյ մեռան». — Ուրիա, Ցովէա։
«Շրջեցան լերդ մաշկոց». — Եղիա, Եղիսէէ։
«Կարօտեալք, նեղեալք». — Մարդա էքն զոր կն սիրեաց Աբէլու։
Ուր կ'ըսէ առաքեալ ի Թղթին առ. «Ցիտոս. Ապաց ոմն ի նոցանէ իւրեանց (սկ մարգարէն». ի լ. Ցեզիմենիդեսան հարցիկ ըղձութիւն։

Ի վերջ Ցայտնութեան յիշատակարան նորագիր. Ես Մարգարէս գնեցի ըզգիրքս ի հալալ արդեանց իմոց, և վերստին ընծայեցի վարագայ, յիշատակ ինձ և ծնողաց իմոց. հօրն իմոյ Մկրտչի» ...։

Ապա միւս այլ յիշատակարան՝ ընտիր բոլորագրով. «Ի մեծափառ սուրբ ուխտիս Ստեփէի սուրբ առաքելոյս՝ ծառա և սպասաւոր տերին Գրիգոր վարդապետ՝ ցանկացաւղ եղև աստուածաշունչ սուրբ տառիս. և առեալ զսա յիւր յիշատակ և ամենայն արեան մերձաւորաց, և զի վայելեսցէ ուսմամբ զամենայն ցկեանս իւր, և ոչ եղև հասու ըստ խորհրդոյն. այլ կարճաբերեալ եղեալ փոխեցաւ առ Քրիստոս. և ետ սակաւուց վաճառող տառիս եկն դարձեալ սկսաւ վիշել և ասել թէ ձեր փողն առէք և մեր աւետարանն տուք մեզ։ իսկ վանիցս արքեպիսկոպոսն Յովհաննէս հնգետասան հազար զահեկան դրամ տուաւ իւր քսակէն և խափանեաց գնորա վիճմունքն, ուստիւք և միաբանից փկայութեամբ ձեռամբ մեղնեցի Յովհաննէս վարդապետին, և մերոյ Մեսրոբ արքեպիսկոպոսի, և Ղազար եպիսկոպոսի վկայութեամբն. կնքով և մատանահարեաւ փակեաց, որ այլ մարդոյ բան չըլինի խաւսելոյ... ի թուիս Հայոց ՌՂԱ. ես անարժան սուտանուն Մինաս կազմեցի սուրբ աւետարանս. աղաչեմ յիշել...»։

Շարունակելի

ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ի ԼՈՆՏՐԱ

Անգղիացի հռչակաւոր վիպասանն, Վալտեր Պրզենթ, իւր մի նոր վիպասանութեան հարկաւոր եղած նիւթերը հաւաքելու համար՝ Լոնտրայի հասարակ ժողովրդեան կեանքն ուսումնասիրելով՝ զարմացաւ, տեսնելով որ Լոնտրայի բովանդակ արևելեան մասին մէջ, այսինքն գրեթէ մէկ միլիոն բնակչք կազմեալ քաղաքի մը, չի գտնուիր ոչ հասարակաց գրատուն մը, ոչ գրավաճառ, և ոչ օրագիր մը։

Տկարնսի բարերար և փառաւոր շաղաց հետևելով՝ ոչ միայն տեսաւ Լոնտրայի արևելեան մասին մեռելական կերպարանքը, տգեղութիւնը, ժողովրդեան ծանր գաղջութիւնը, անյայտելի տգի-

digitised by A.R.A.R.@